**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ**

# ՀՐԱՄԱՆ № 36

«23» 08 2019 թ. ք.Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լոռու մարզի դատախազ Արսեն Ռուբիկի Մարտիրոսյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերի քննության նկատմամբ հսկողության վարչության պետի պաշտոնում նշանակելու և նրա պարտականությունների կատարումը նույն մարզի դատախազի տեղակալ Գարեգին Ժորայի Մանուկյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 21.08.2019թ. N 159-Ա և 160-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝**

1. Կատարել Ա.Մարտիրոսյանի կողմից՝ Լոռու մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Գ.Մանուկյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Ասլանյան Հայկ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնախմբի անդամներ՝***

Շիրոյան Արմեն - Լոռու մարզի դատախազի տեղակալ

Մարտիրոսյան Հայկ - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Սմբատյան Ռոման - Հայաստանի Հանրապետության դատախազության քարտուղարության պետ

| | |
|---|---|
| Խալաթյան Նաիրա - | Հայաստանի Հանրապետության դատախազության քարտուղարության արխիվի բաժնի պետ |
| Գնորգյան Թամարա - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար |
| Մխիթարյան Վեներա - | Լոռու մարզի դատախազության տարածքային բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2019 թվականի սեպտեմբերի 2-ը:

Ա. ԴԱՎԹՅԱՆ